

ԸՆԴԴԻՄԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԴՕԻՔ

Աննա Սարգսյանի «Մտավորականության գեղարվեստական քննության փորձը
Զապել Եսայանի վիպագրության մեջ» թեկնածուական ատենախոսության
վերաբերյալ

Մեր գրականության և մշակույթի պատմության մեջ Զապել Հովհաննիսյան – Եսայանն իր ստեղծած մնայուն արժեքներով ու հայանպաստ, հայրենանվեր գործունեությամբ նվաճել է առանձնահատուկ կարևոր տեղ. Եվրոպայում՝ Սորբոնի համալսարանում գրականության և փիլիսոփայական դասընթացներով բարձրագույն կրթություն ստացած այն բացառիկ կին գրողն է նա, որը, նախանցյալ դարի 90-ականներից բանաստեղծությամբ սկսելով իր գրական ուղին՝ անցել է արձակի և նրա գրեթե բոլոր ժանրաձևերով ստեղծագործել մինչև 1937 չարաբաստիկ թվականը՝ մինչև իր կյանքի ողբերգական ընդհատումը ստալինյան բռնատիրության պայմաններում:

Եր. Օտյանի վկայությամբ՝ 1890-ական թթ. վերջին և հաջորդ դարասկզբին Փարիզում Օդեոն հրապարակի մոտակայքում Արշակ Չոպանյանի վարձած բնակարանում, որ «ժամադրավայրն էր բոլոր հայ բռնեմներուն», ուսանողուհի օրիորդ Զապել Հովհաննիսյանը, այն ժամանակներում դեռևս Ատոմ Միրզա կոչվող Սիամանթոյի, Սուրեն Պարթևյանի, Էդգար Շահինի և համիդյան ջարդերից հետո Փարիզ ապաստանած ուրիշ հայ մտավորականների հետ հաճախակի էր մասնակցում հայության ներկա վիճակի, մտավորականության դերի, հայ երիտասարդության անելիքների, գրականության և արվեստի տարաբնույթ խնդիրների քննարկումներին: Այդ միջավայրում հայության առջև ծառայած օրախնդիր հարցերի շուրջ ասուլիսներում ունեցած բուռն ելույթներում նա դրսևորում էր իր մտացիությունն ու խելացիությունը, մարդկային ու հասարակական հարաբերությունների, քաղաքական նորագույն զարգացումների հանդեպ ճշգրտում իր վերաբերմունքը: Արվեստների մայրաքաղաքում այդ շփումներն անչափ կարևոր էին ապագա գրողի կենսաճանաչողության, աշխարհայացքի ընդլայնման ու հարստացման, քաղաքացիական նկարագրի, գրողական խառնվածքի ձևավորման ու կայունացման համար: Նաև այստեղից ստացած իմացականությամբ ու ներշնչումներով է ծննդավայր Պոլիս վերադարձած Զապել Եսայանը ձևավորվել որպես ազգային մտավորական գործիչ, հայ և օտարալեզու հեղինակավոր թերթերի էջերում տպագրել իր հրապարակախոսական հայանպաստ հոդվածները, որոնցում դատապարտում էր ցեղասպան «ոճրապարտ թուրք ցեղի» գազանային

վայրագությունները, սրանց գուգահեռ՝ ստեղծում իր վիպական մեծ ու հարուստ աշխարհը, որի **նորովի** քննությունն է գիտական աստիճանի հայցման համար մեր դատումին ներկայացված ատենախոսությունը:

Նորովի քննությունն ընդգծում ենք, որովհետև Չ. Եսայանն ու նրա գեղարվեստական ժառանգությունը, թեև 1937 – 1954 թթ. Չարենցի, Բակունցի, Թոթովենցի, Մահարու և արևմտահայ շատ գրողների նման արգելված էր խորհրդային երկրում, իրականում չի անտեսվել գրականագիտության կողմից: «Անվանի գրագիտուհին» (սա Չոպանյանի, արևմտահայ, ապա և՛ սփյուռքահայ մտավորականության կողմից գրողին տրված ընդունելի և տարածված գնահատական է) դեռ 90-ական թթ. մամուլում տպագրած առաջին իսկ գործերով իր վրա էր հրավիրել գրական քննադատության ուշադրությունը և հանրահռչակվելուց հետո էլ, մանավանդ հետմահու արդարացումից հետո արժանացել գրականագետների լուրջ ուշադրությանը՝ հոդվածների, ուսումնասիրությունների և գիտական ծանրակշիռ մենագրությունների տեսքով: Սակայն միշտ էլ դժվար է եղել մանավանդ մեծ տաղանդի գնահատման ուղին. դրամփյանիզմի հանդիպած հանճարեղ Թումանյանը մեզ օրինակ: Գրական միջավայրը դժվարությամբ է համակերպվել նաև Չ. Եսայան գրողին ընդունելու գաղափարին. եղել է անհարկի դիմադրություն, որ մարել է աստիճանաբար, և ինքնահաստատված ու վաստակյալ գրողի մասին այսօրվա պատկերացումներն ստեղծվել են հաջորդական նվաճումներով: Սույն ատենախոսությունն էլ դրանցից մեկն է:

Ատենախոսությունն ունի գրականագիտության արդի պահանջներին համապատասխան կուռ կառուցվածք՝ ներածություն, երեք գլուխներ, վերջաբան՝ ուսումնասիրության արդյունքներն ամփոփող եզրակացությունների տեսքով, և գրականության ցանկ, որն ընդգրկում է Չ. Եսայանին առնչվող գեղարվեստական ու գիտատեսական գրեթե ողջ գրականությունը, մամուլը և օգտագործած էլեկտրոնային ռուսերեն և օտարալեզու աղբյուրները, ընդհանուր առմամբ՝ 165 միավոր:

Արձանագրում ենք, որ հայցորդը մեծ ջանքեր է ներդրել՝ նախանցյալ դարավերջի և անցյալ դարի առաջին տասնամյակների մամուլը, գրական կյանքն ու մթնոլորտը ուսումնասիրելով: Թող իբրև սուկ հայտարարություն չընկալվի մեր համոզումը, թե երիտասարդ ուսումնասիրողն օժտված է գրականագիտական հստակ մտածողությամբ, որի շնորհիվ նրա աշխատանքն ունի գիտական խոսքի բնական ու տրամաբանական զարգացման ընթացք, ատենախոսության մեջ քննարկվող հարցադրումներն արդիական են, վերլուծություններն ու եզրահանգումները՝ համոզիչ:

Ներածության մեջ հիմնավորվում են ատենախոսության թեման, նրա արդիականությունն ու գիտական նորությը, պարզաբանվում են ուսումնասիրողի առաջադիր նպատակն ու խնդիրները: Բարեխիղճ ուսումնասիրությամբ հեղինակը ներկայացրել է հարցի պատմությունն ու թեմայի մշակվածության աստիճանը, արժևորել նախորդների վաստակն ու դերը:

Թեպետ ուսումնասիրությունը նա կատարել է Չ. Եսայանի ստեղծագործությունն իր հարցադրումների տեսանկյունից դիտարկելով, բայց գրողի նախորդների ու ժամանակակիցների ստեղծագործության լայն համապատկերում՝ հաճախ նրանց համաբնույթ երկերի բաղդատումներով և գրական-գեղարվեստական մտքի զարգացման օրինաչափությունների բացահայտումներով՝ հրնթացս բնութագրելով նաև նրա գրական ուղղությունն ու գեղարվեստական մտածողության և կերպարակերտման արվեստի յուրահատկությունները: Սա հեղինակի խոշոր առավելությունն է և նրա աշխատության կարևոր արժանիքներից մեկը:

Գիտական աստիճանի հավակնորդ Ա. Սարգսյանն իր աշխատանքը հիմնավոր ու հասկանալի դարձնելու համար ուզեր թե չուզեր նախորդների հետ պիտի քննարկեր **մտավորականություն** հասկացության շուրջ եղած տարակարծությունները և հստակեցներ մտավորականի իր ըմբռնումը, առանց որի անկարելի պիտի լիներ Չ. Եսայանի վեպերում ու վիպակներում կերպավորված մտավորականների նկարագրի, մտածողության, բնավորության, գործելակերպի ու վարքագծի և առհասարակ մարդ – հասարակություն հարաբերության գեղարվեստականացումը, որը հենց ատենախոսության բուն նպատակն է ու հիմնախնդիրը: Այդ նպատակը պատշաճ մակարդակով իրականացվել է ատենախոսության երեք գլուխներում:

Առաջին գլխում, որը վերնագրված է «20-րդ դարակզբի ուսանող մտավորականության նկարագիրը», դիտարկված է գրողի անդրանիկ՝ «Սպասման սրահին մեջ» վեպում պատկերված՝ Փարիզի ուսանող մտավորականության հոգեվիճակն ու ձգտումները՝ նրա շուրջ տիրող հասարակական անտարբերության համադրությամբ: Առհասարակ, Չ. Եսայանը, որպես գրող և արվեստագետ, նպատակադրված է պատկերել բնությունը և գործողության միջավայրը՝ հերոսի, նրա հոգեբանության, գաղափարների ու նպատակների համադրումով, և այս յուրահատկությունը դիպուկ է նկատել հայցորդը՝ իր մեկնությունը հիմնավորելով բնորոշ օրինակներով: Այս գլխում հեղինակը միաժամանակ լուծել է այդ երկին առնչվող երկու հիմնախնդիր:

Նախ՝ նա Սևակ Արզումանյանի՝ վիպակ, Գր. Հակոբյանի՝ նորավեպ, Գր. Պըլտյանի՝ վեպ անվանումների համադրական քննությամբ ճշգրտել է, որ այդ երկը ժանրաձևով ի վերջո վեպ է՝ մատնանշելով նրա ժանրային բնորոշ հատկանիշները:

Երկրորդ՝ Արշակ Չոպանյանի խմբագրությամբ Պոլսում հրատարակված «Ծաղիկ» շաբաթաթերթի 1903 թ. համարներում տպագրվածի և սփյուռքահայ հայտնի գրականագետ Գր. Պըլտյանի՝ 2017 թ. առանձին գրքով հրատարակածի համեմատությամբ նա հայտնաբերել է, որ այս վերջին հրատարակությունից բացակայում է շատ կարևոր մի հատված, որը եղել է «Ծաղիկ» շաբաթաթերթի 1903 թ. 32 – 46-րդ համարներում առաջին հրատարակության մեջ և 2017 թ. տպագրվածում իր բացակայությամբ խախտում է վեպի կառուցվածքն ու գեղարվեստական ամբողջականությունը: Սա, ինչ խոսք, բանասիրական կարևոր ճշտում է:

Նշենք նաև, որ վեպն արժևորվել է նախորդ դարասկզբի մամուլում արձագանքների և գրականագիտական ուսումնասիրությունների գուգադրական քննությամբ, որով բնութագրվում են նաև տարբեր սերունդների ընկալումներն ու գրական մտքի շարժը:

Լայնախոհ այս մոտեցումը բնորոշ է նաև Չ. Եսայանի մյուս երկերի նրա դիտարկումներին, որոնք կատարվել են մտավորական երիտասարդության կերպավորման՝ Չ. Եսայանի գաղափարական և գեղագիտական հարցադրումների մեկնաբանման տեսանկյունով:

Որևէ գիտական կամ գեղարվեստական երկում, անշուշտ, կարևոր և կողմնորոշիչ է նաև վերնագրի համապատասխանությունը շարադրանքին: Սույն ատենախոսության մեջ չի նկատվում վերնագրի և շարադրանքի որևէ անհամապատասխանություն կամ անորոշ վերացականություն, ընդհակառակը՝ ամեն բան որոշակի է և առարկայական. ակնառու է նրանց օրգանական սերտությունը, այսինքն՝ վերնագրերն ինքնին հարցադրումներ են, շարադրանքը՝ գիտական վերլուծություններ և տրամաբանված պատասխաններ: Ասվածի լավագույն օրինակը երկրորդ՝ «Մտավորական – միջավայր փոխառնչությունների քննության փորձ» գլուխն է իր երեք ենթաբաժիններով, որոնք վերնագրված են՝

ա. «Պոլսական միջավայրի ազդեցությունը մտավորական կերպարների ինքնարտահայտման վրա»,

բ. «Հայրենասիրությունն իբրև գաղափար և վարքագիծ»,

գ. «Առաջադեմ մտավորականի սիրո ընկալումները»:

Արտաքուստ անհարիր թվացող այս հարցադրումները մի գլխում դիտարկելը, նրանց ներքին աղերսների խոր ըմբռնումով միատեղել - միավորելը և ս կարողության արդյունք է և արժանիք:

Բնական է, որ եվրոպական քաղաքակրթությանն արդեն քաջածանոթ գրողը, ծննդավայր վերադառնալով, հայ մարդու և արվեստագետի հայացքով դիտելով 20-րդ դարասկզբի Պոլիսն ու նրա եվրոպականացող բարքերը՝ գոհ չպիտի լիներ այդ իրողությունից: Իր դժգոհությունը նա պիտի արտահայտեր թե՛ հրապարակախոսական հոդվածներով ու հրապարակային բանախոսություններով և թե՛ գեղարվեստական երկերով: Ատենախոսության մի կարևոր արժանիքն էլ այն է, որ նրա հեղինակը Չ. Եսայանի վեպում կամ վիպակում նման հիմնախնդիրներ դիտարկելիս չի անտեսել Չ. Եսայանի փոքր կտավի գեղարվեստական, ինչպես և հրապարակախոսական երկերը, որոնցում նույն ազգային կամ հանրային մտահոգությունը, օրախնդիր հարցն արձարծվել է ժանրային տարբերություններով պայմանավորված այլ ձևակերպումներով:

Մտավորական – միջավայր անխուսափելի բախումը, կրթված առաջադեմ երիտասարդության և հետամնաց հասարակության հակասություններն արտացոլված են «Սկյուտարի վերջալույսներ», «Հոգիս աքսորյալ», «Կեղծ հանճարներ», «Շնորհքով մարդիկ», «Արգելք», «Միլիտարի պարտեզները» վեպերի ու վիպակների վերլուծությամբ: Հայցորդը կարևորելով առանձնացնում է այն գաղափարները, որոնք հեղինակն արժևորում է հոգեմտավոր առաջադիմության, ազգային միասնության ու համազգային մեկ միասնական նպատակի շուրջ համախմբվելու տեսանկյունից: Դրանց կրողը Փարիզից Պոլիս վերադարձած հերոսուհին է, որին գրականագետները, ոչ առանց հիմքի, նույնացրել են հեղինակին: Մտավորականներին կերպավորելիս, ինչպես ատենախոսն է ճիշտ բանաձևել, Չ. Եսայանը պատումը ներկայացնում է առաջին դեմքով կամ թաքնվում է իր կերպավորած հերոսուհու կամ հերոսի անվան ետևում և նրա միջոցով է հանրությանը ներկայացնում սեփական մտորումները հայրենասիրության և մարդկային սիրո մասին ուսանող կամ ուսուցիչ մտավորականության գաղափարական ուղղորդումները: Այս գործընթացում էլ, ինչպես հայցորդն է ճիշտ բնորոշում, ինքնակերպավորվել է վիպասանուհի հեղինակը:

Չ. Եսայանն ապրեց և ստեղծագործեց մեր ժողովրդի համար ճակատագրորեն բարդ ժամանակներում. համիդյան ջարդերի, Սասունի և Կիլիկիայի հայության կոտորածների, 1915 – 1923 թթ. հայոց ցեղասպանության, թուրք բռնապետության դեմ ծավալված ազգային - ազատագրական ֆիդայական շարժման ու ինքնապաշտպանական հերոսամարտերի, Առաջին համաշխարհային պատերազմի, կամավորականների և հեղափոխականների

կյանքի, Հայաստանի Առաջին Հանրապետության և նրա խորհրդայնացման գեղարվեստական տարեգիրն էր նա՝ այդ իրադարձությունների՝ հայ երիտասարդության վրա ունեցած ներգործության պատկերումով: Այդ իրականության մեջ կային և՛ փառավոր հաղթանակներ՝ հայրենիքի ազատագրության հույսերով, և՛ ողբերգական կորուստներ ու ծանր հուսախաբություններ, և՛ քաղաքական ու գաղափարական ծայրաբևեռներում հայտնված հերոսներ ու հակահերոսներ: Կյանքի մի իսկական քառու, որից իր երկերի նյութը գաղափարական ու գեղագիտական որոշակի նպատակադրմամբ ընտրելու և կարգաբերված գեղարվեստականացնելու պարտականությունն ուներ գրողը: Դյուրին չէր այս իրավիճակում բոլորին ընդունելի կողմնորոշում որդեգրելը: Այս պատճառով էլ նաև քննադատության արժանացավ Յեղասպանությունից սահմնկելով Հայաստանի խորհրդայնացումը փրկություն համարող վիպասանուհին, որն ինքն էլ դարձավ իր փառաբանած իրականության չար ուժերի գոհր:

Ատենախոսության երրորդ գլուխը, որը վերնագրված է «Գրողի նոր քաղաքական ըմբռնումների անդրադարձը», գիտական նույն բարեխղճությամբ քննաբանում է Չ. Եսայանի խորհրդամետ և Խորհրդային Հայաստանում գրած ստեղծագործությունները՝ «Նահանջող ուժեր» և «Բարպա Խաչիկ» վեպերը: Այս գլխում էլ հայցորդը խոր ըմբռնումով ներկայացնում է վիպասանուհու երկվությունները, կարդում ու մեկնաբանում է ոչ միայն բնագիրը, նրանում կերպավորված երիտասարդ մտավորականներին, Խորհրդային Հայաստանում համախմբված, երկրի վերաշինության ու ծաղկեցման հեռանկարով խանդավառ ճարտարապետներին, գիտնականներին, գրողներին ու մյուս արվեստագետներին, այլև մատնացույց է անում ենթատեքստը, համարձակորեն պարզաբանում գրողի վրիպումներն ու նրա երկերի թերությունները:

Այս անառարկելի արժանիքներով հանդերձ՝ ատենախոսության էջերում նկատվում են նաև բարեբախտաբար սակավ, շտկելի թերություններ, որոնցից մի երկուսի վրա հրավիրում ենք հայցորդի ուշադրությունը՝ աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

11-րդ էջում կարդում ենք. «Ուսումնասիրության արդյունքները կարող են կիրառվել հատուկ դասընթացների շրջանակներում, օգտակար լինել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման համար, գործերի վերա-

հրատարակումների ժամանակ. անդրադարձել ենք վիպագրության մեջ որոշ անհարկի խմբագրումներին կամ շփոթումների արդյունքում որոշ չտպագրված հատվածներին»:

Այս պարբերության մեջ, թվում է, ամեն ինչ հարթ է, սակայն այն իրոք խմբագրման կարիք ունի, որովհետև հեղինակը համեստորեն դուրս է թողել կիրառության բուն ոլորտը՝ Ջ. Եսայանի մասին հիմնական դասախոսությունը, որ հաստատված է բուհական ծրագրով: Բացի սրանից՝ «մոռացվել» են նաև ռեֆերատներն ու կուրսային աշխատանքները, թեև հասկանալի է, բայց հստակ չի նշված՝ ո՛ւմ գործերի վերահրատարակության ժամանակ իր նկատառումները պետք է հաշվի առնվեն: Իսկ «վիպագրության մեջ անհարկի խմբագրումների» կամ «շփոթումների» պատճառով չտպագրված հատվածները իրականում անուշադրության և անփութության հետևանք են անկախ անձից: Մեջբերված պարբերությունում անհաջող է «վիպագրության մեջ անհարկի խմբագրումներ» արտահայտությունը, որովհետև անհարկի խմբագրումները կատարվել են ոչ թե Ջ. Եսայանի վիպագրության մեջ, այլ նրա երկերի հրատարակություններում, իսկ Ջ. Եսայանի վիպագրության մեջ միայն հեղինակն ինքը կարող էր խմբագրումներ անել: Նաև «օգտակար լինել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման համար»-ի փոխարեն առաջարկում ենք կատարման ընթացքում:

Գրականության ցանկից դուրս է մնացել պրոֆ. Ալ. Մակարյանի՝ Ջապել Եսայանի «Միլիտարի պարտեզները» ինքնակենսագրական վեպի մասին բավական ընդարձակ և հիմնավոր ուսումնասիրությունը, որը «ՎԷՄ» հանդեսում տպագրվելուց հետո դրվել է վեպի վերջին հրատարակության մեջ որպես վերջաբան:

Անկեղծ ասած՝ ընդունելի չէ նաև կերպարի կամ հերոսի փոխարեն տարբեր էջերում *նկարագիր* բառի գործածությունը, մանավանդ հոգնակի *նկարագրեր* ձևով: Մասնագետը պետք է նկատի ունենա, որ մարդկային բնավորություն, տիպ կերտող գրողը ոչ թե նկարագրում է, այլ պատկերում կամ կերպավորում է հերոսի նկարագիրը, իսկ նկարագրությունը (բնության, գործողության միջավայրի կամ որևէ տեսարանի) կարող է դրսևորվել հեղինակային խոսքում:

Կարծում ենք՝ սրանք շտկվելու են հետագա աշխատանքում և ուսումնասիրությունը հրատարակության պատրաստելիս:

Ամփոփելով ասենք, որ քննարկվող գրականագիտական աշխատանքը հասուն մտքի արդյունք է, որը, Ջ. Եսայանի ստեղծագործության «կրկին բեկումը» լինելով, ներկայացնում է այն նոր տեսանկյունով ու նոր կողմերով, գրական մտքի համապատկերում և ունի թե՛ տեսական, թե՛ գիտագործնական նշանակություն: Մանավանդ արժեքավոր են անհարկի խմբագրումներին և չտապագրված հատվածներին վերաբերող բանասիրական ճշտումները, որոնք կիրառվելու են Ջ. Եսայանի երկերի լիակատար ժողովածուի հնարավոր հրատարակման ժամանակ:

Ուստի լիասիրտ միջնորդում ենք ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության հնստիտուտում գործող ԲՈԿ-ի՝ Գրականություն 003 մասնագիտական խորհրդին՝ Աննա Մարատի Սարգսյանին շնորհելու իր հայցած՝ Ժ. 01.02. – «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտացմամբ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանը, որին նա միանգամայն արժանի է:

ՊԱՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝ *Ա. Ա. ԱՎԱԳՅԱՆ* ՍԱՄՎԵ ՍՈՒՐԱԴՅԱՆ

Բ. Գ. Պ., պրոֆեսոր, ԵՊՀ ակադ. Հր. Թամրազյանի անվան
հայ գրականության պատմության և գրականության
տեսության ամբիոնի պատվավոր վարիչ,
ՀՀ գիտության վաստակավոր գործիչ

Պաշտոնական ընդդիմախոս պրոֆ. Ս. Մուրադյանի ստորագրությունը
հաստատում եմ՝ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան՝

Ա. Ա. ԱՎԱԳՅԱՆ
Բ. Գ. Պ., պրոֆեսոր

05. 06. 2023

